# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի բնակչության ընդհանուր ժողովի

19.01.2017թ.
գ. Այգեկ

Ժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Աբրահամյան

քարտուղար՝ աշխատակազմի քարտուղար Գ. Սարգսյան

մասնակիցներ՝ մարզպետարանի ներկայացուցիչ՝ Վասրազդատ Սկրտչյան,

համայնքի 22 բնակիչ:

Լսեցին - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ղեկավարի 2016 թվականի տարեկան հաշվետվությունը՝ բյուջեի կատարողականի և կատարված աշխատանքների վերաբերյալ /զեկ. համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան/:

Կից ներկայացվում է հաշվետվությունը:

Ժողովի նախագահ՝ _____ Մ. Աբրահամյան

Ժողովի քարտուղար՝ _____ Գ. Սարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*1. Համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեի կատարողականը՝*

2016 թվականի համայնքի բյուջեի սեփական եկամուտները առ 30.12.2016թ 7625,3 հազար դրամ է, որը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմում է 100,8%:

*ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*

հազար դրամ

| | Եկամուտների տեսակները | Տարեկան պլան | Հաշվետու ժամանակաշրջան | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հաշվարկային պլան | Փաստացի | Տոկոս |
| 1 | հողի հարկ | 1870,0 | | 1843,0 | 98,5 |
| 2 | գույքահարկ շենք.շինությունների | 4370,8 | | 4405,5 | 100,8 |
| 3 | տեղական տուրքեր | 198,0 | | 228,0 | 115,1 |
| 4 | վարձակալական վճար | 428,3 | | 428,3 | 100,0 |
| 5 | տեղական վճարներ | 700,0 | | 719,2 | 102,7 |
| 6 | դոտացիա | 26770,4 | | 26770,4 | 100,0 |
| 7 | տարեսկզբի ազատ մնացորդ | 2085,3 | | 2085,3 | |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | | 36422,8 | | 36481,0 | 100,1 |

*ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ*

հազար դրամ

| | Ծախսերի տեսակները | Տարեկան պլան | Հաշվետու ժամանակաշրջան | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հաշվարկային պլան | Փաստացի | Տոկոս |
| 1 | կառավարման ապարատ | 17111,8 | | 15650,1 | 91,4 |
| 2 | նախադպրոցական կրթություն | 10900,0 | | 10900,0 | 100,0 |
| 3 | մշակույթ, սպորտ, կրոն | 4560,0 | | 4012,7 | 88,0 |
| 4 | աղբահանություն | 1584,0 | | 1430,0 | 90,3 |
| 5 | սոց.ծրագրեր | 1390,0 | | 1300,0 | 93,5 |
| 6 | գյուղատնտեսություն | 877,0 | | 813,6 | 92,8 |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | | 36422,8 | | 34106,4 | 93,6 |

*2. 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքները.*

1. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 8 նիստ՝ 6 հերթական, 2 արտահերթ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով, որի ընթացքում ընդունվել է ավագանու 48 որոշում:
2. Ընդունվել է համայնքի ղեկավարի 39 որոշում, արձակվել՝ 25 կարգադրություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և այլ կազմակերպություններ են ուղարկվել 178 գրություններ:
4. Բնակիչներին տրամադրվել են 397 տարբեր բնույթի տեղեկանքներ:
5. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ՝
6. Բյուջեի միջոցներով գնվել և մատուցվել են հետևյալ ապրանքներն ու ծառայությունները՝

   1) Մշակութային ոլորտում՝

   ա. ապրիլի 7-ի Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, չխախտելով ավանդույթը, համայնքի 126 կանանց՝ թոշակառու մայրերի, համայնքապետարանի, մանկապարտեզի, դպրոցի, մշակութային հիմնարկների, բուժկետի և փոստային բաժանմունքի աշխատողների համար 398 000 դրամով գնվել են նվերներ:

   բ. համայնքի միջնակարգ դպրոցի թվով 16 շրջանավարտների համար գնվել են նվերներ՝ 56 800 դրամ արժեքով:

   գ Այգեկի մանկապարտեզից դպրոց հաճախող 32 երեխաների համար գնվել են նվերներ՝ դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ ընդամենը՝ 222 400 դրամ արժողությամբ:

   2) Ձեռք են բերվել 5 հատ հակահրդեհային կրակմարիչներ 100 000 դրամով.

   3) Այգեկ համայնքի 2016 թվականի բյուջեից տրամադրվել է դրամական օգնություն՝ ընդամենը 1270 000 դրամ՝ համայնքի անապահով ընտանիքներին և Արցախյան քառօրյա պատերազմի մասնակիցներին:
7. «Հայաստան» համահայկական հիմնադրամին ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն՝ 30 000 դրամ գումարով:
8. Անցկացվել է համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների հերթական ատեստավորումը:
9. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը գործուղվել է Արմավիրի մարզպետարան՝ մասնակցելու համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին:
10. Պատվիրվել է համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման նախահաշիվ՝ 397 000 դրամ գումարով:
11. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար համայնքապետարանի աշխատակիցների նկատմամբ կիրառվել է խրախուսում՝ ընդամենը՝ 929 500 դրամ:

Այգեկ համայնքի ղեկավար՝ _____ Վ. Աբրահամյան

2017 թվականի հունվարի 19
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզ գ. Այգեկ